ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«19» հուլիս 2021թ. No 2751 - Լ

Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը հաստատելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման 46-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2021 թվականի հուլիս « 19 » - ի թիվ 2751 - Լ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1. Սույն ուղեցույցի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:
2. Ուղեցույցում ներկայացվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումներ, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը:
3. Սույն ուղեցույցը նախատեսված է հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար:
4. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումը ստանալու իրավունքը սահմանված է Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ, մասնավորապես հաշմանդամության խումբ ունեցող անձինք ընդգրկված են որոշման հավելված 1-ով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում:
5. Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից, այդ թվում նաև հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայություններից, ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից, վերարտադրողականության

օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից, ինչպես նաև դեղերի տրամադրման ծառայություններից:

6. Բնակչության, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց արտահիվանդանոցային պայմաններում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) գործառույթ իրականացնող կազմակերպություններում առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բժշկական օգնության և սպասարկման ողջ ծավալը*, ներառյալ.

1) ԱԱՊ գործառույթ իրականացնող բժշկի (տեղամասային թերապևտի, մանկաբույժ, ընտանեկան բժշկի, մանկաբարձ-գինեկոլոգի) խորհրդատվությունը և բուժումը,

2) ըստ բժշկական ցուցումների ԱԱՊ գործառույթ իրականացնող բժշկի ուղեգրմամբ մասնագետների՝ ակնաբույժի, քիթ-կոկորդ-ականջաբանի, սրտաբանի, նյարդաբանի, վիրաբույժի կողմից իրականացվող բժշկական օգնությունը, ընդ որում մատուցվող ծառայությունների ծավալը հաստատվում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից,

3) ԱԱՊ գործառույթ իրականացնող բժշկի կողմից իրականացվող տնային այցերն և մասնագիտական խորհրդատվության անհրաժեշտությունն առաջանալու դեպքում ԱԱՊ գործառույթ իրականացնող բժշկի հիմնավորմամբ՝ համապատասխան նեղ մասնագետի կողմից իրականացվող տնային այցերը,

4) լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, որոնց ցանկը հաստատվում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից,

5) ամբուլատոր-պոլիկլինիկական դիսպանսերային (շարունակական հսկողություն իրականացնող) մասնագիտական խորհրդատվությունները՝ վարակաբանական, ուռուցքաբանական, ներզատաբանական, մաշկավեներաբանական, հոգեբուժական/նարկոլոգիական, հակատուբերկուլոզային,

6) տնային պայմաններում բժշկի նշանակմամբ բուժքրոջ կողմից կատարվող միջամտությունները (վիրակապություններ, միջմկանային, ներերակային ներարկումներ և այլն),

7) տարեկան մեկ անգամ կանխարգելիչ քննություն՝ բժշկական կազմակերպություն կատարած առաջին այցի, ինչպես նաև հիվանդությունների կապակցությամբ կատարած տնային կանչերի ժամանակ,

8) ԱԱՊ գործառույթ իրականացնող բժշկի կողմից՝ բժշկական ցուցման դեպքում պետական պատվերի շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման, հիվանդանոցային բուժման ուղեգրում՝ էլեկտրոնային ձևով, ընդ որում ուղեգրի ժամկետը 1 ամիս է:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրումը կազմակերպվում է Կառավարության 2019 թվականի մայիսի 5-ի թիվ 642-Ն որոշմամբ, մասնավորապես.

ա. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց դեղերը հատկացվում են դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ,

բ. 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց դեղերը հատկացվում են մասնակի փոխհատուցմամբ՝ 50 տոկոս զեղչով:

8. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները կազմակերպվում են համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ Առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 53-Ն հրամանի համաձայն:

9. Հաշմանդամություն ունեցող անձինք համաձայն Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» թիվ 568-Ն որոշման օգտվում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու արտոնություններից:

10. Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային պայմաններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է.

1) վիրահատական, թերապևտիկ և վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները,

2) նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունները՝ հաշմանդամության 1-ին և 2-րդ խումբ ունեցող անձանց, զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխաների համար, որոնց ցանկը հաստատված է Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 5-ով, մասնավորապես.

ա. գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարույրի և օնիքսի արժեքը).

բ. կլիպսների օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

գ. շունտավորող համակարգերի օգտագործումը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

դ. էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժում՝ նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ.

ե. սրտի բաց վիրահատություն, կորոնար անոթների բալոնային դիլատացիա, կորոնար անոթների ստենտավորում՝ ինչպես դեղապատ, այնպես էլ՝ ոչ դեղապատ ստենտերով, սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա.

զ. աորտայի անևրիզմաների պատռվածքների և (կամ) շերտազատումների վիրահատություններ.

է. կարդիովերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիա.

ը. սրտի կաթետերային աբլացիա.

թ. խոշոր և պերիֆերիկ անոթների բալոնային դիլատացիա և ստենտավորում.

ժ. սիներակի (Վ. Կավա/V. Cava) ֆիլտրի տեղադրումը (ներառյալ ֆիլտրի արժեքը).

ժա. արթրոսկոպիկ վիրահատություններ.

ժբ. բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների, ընդ որում, միայն հարթակների, պտուտակների և շյուղերի արժեքները.

ժգ. շագանակագեղձի միջմիզուկային մասնահատում (ՏՈՒՌ, TYP)՝ բիպոլյար կամ լազերային եղանակով.

ժդ. քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ուրեթերոռենոսկոպիկ.

ժե. սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա.

ժզ. աչքի առաջային խցիկի արհեստական փականների կիրառում (շունտավորում),

ժէ. սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատություն (կորոնար անոթների ստենտավորում).

ժը. գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների բուժում (ներառյալ ներերակային թրոմբոլիտիկ թերապիան ալտեպլազա դեղով):

3) վերականգնողական բժշկական օգնությունը և սպասարկումը, ընդ որում.

ա. վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց ուղեգրումը վերականգնողական բժշկական օգնությունը ցուցաբերող հիվանդանոցային բժշկական կազմակերպություն իրականացվում է այն դեպքերում, երբ հաշմանդամություն ունեցող անձը նախապես ստացել է հիվանդանոցային բժշկական օգնություն ու սպասարկում և բժշկական եզրակացությունում (էպիկրիզում) խորհուրդ է տրվել բուժման արդյունավետությունը ապահովելու նպատակով շարունակել հետագա վերականգնողական բուժումը՝ հաշվի առնելով վերականգնողական բուժման ցուցումները և հակացուցումները,

բ. հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է նաև բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից տրված վերականգնողական անհատական ծրագրերի (ՎԱԾ) հիման վրա:

11. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը, հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները կազմակերպվում են բոլոր այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, որոնք Առողջապահության նախարարության հետ կնքել են «Պետության կողմից երաշխավորված և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր:

12. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, մասնավորապես՝

1) պացիենտին հիվանդասենյակով ապահովելը.

2) մասնագիտացված խորհրդատվությունները.

3) լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները.

4) վիրահատությունները, վիրահատական և ֆիքսող միջոցները.

5) բուժական միջամտությունները.

6) դեղերով ապահովումը, թթվածնի և բժշկության մեջ կիրառվող այլ գազերի օգտագործումը.

7) ֆիզիոթերապևտիկ բուժումը.

8) պացիենտի խնամքի ապահովումը՝ միջին և կրտսեր բուժական անձնակազմի կողմից.

9) հակատուբերկուլոզային, հոգեկան և վերականգնողական (առողջարանային) բաժանմունքներում հիվանդանոցային հատուկ խնամք պահանջող դեպքերում՝ նաև պացիենտների՝ սննդով պարտադիր ապահովման ծախսերը:

14. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար հիմք են հանդիսանում՝

1) պլանային կարգով բժշկական օգնության և սպասարկման դեպքերում՝ տվյալ անձին սպասարկող ԱԱՊ գործառույթ իրականացնող կազմակերպության բժշկի կողմից տրված ուղեգիրը,

2) անհետաձգելի հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող դեպքերում՝ շտապ բժշկական օգնության ծառայության ուղեգիրը կամ հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանի (հերթապահ) բժշկի եզրակացությունը,

3) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով, հիվանդանոցային պայմաններում լրացուցիչ բժշկական հետազոտություն անցնելու համար՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի ուղեգրմամբ:

15. Հաշմանդամություն ունեցող անձը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման համար ուղեգրի հետ ներկայացնում է անձնագիրը կամ նույնականացման քարտը (դրանց բացակայության դեպքում՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ անձը հաստատող այլ փաստաթուղթ) կամ ծննդյան վկայականը (մինչև 16 տարեկան երեխաների համար) և բժշկասոցիալական փորձաքննական որոշումը՝ տրված բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից:

16. Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ապահովում է տեղեկատվությամբ՝ անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակների և անձի առողջական վիճակի մասին: Իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում՝ հաշմանդամություն ունեցող անձի կամ օրինական ներկայացուցչի ստորագրությամբ:

17. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնությունն և սպասարկման իրավունքը սահմանված է Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 8-ով և հավելված 10-ով: Այն ներառում է.

1) հաշմանդամության 1-ին խումբ ունեցող անձանց համար՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունները, այդ թվում թերապևտիկ (կարիեսի, պուլպիտի և պերիօդոնտիտի բուժում) և օրթոպեդիկ (լրիվ կամ մասնակի շարժական թիթեղային պրոթեզի, պրոթեզավորման համար անհրաժեշտ ատամնաշապիկի պատրաստում, տեղադրում և վերանորոգում (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)) ստոմատոլոգիական բժշկական օգնությունը ու սպասարկումը,

2) հաշմանդամության 2-րդ և 3-րդ խումբ ունեցող անձանց համար՝ թերապևտիկ (կարիեսի, պուլպիտի և պերիօդոնտիտի բուժում) և օրթոպեդիկ (լրիվ կամ մասնակի շարժական թիթեղային պրոթեզի, պրոթեզավորման համար անհրաժեշտ

ատամնաշապիկի պատրաստում, տեղադրում և վերանորոգում (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ)) ստոմատոլոգիական բժշկական օգնությունն և սպասարկումը կազմակերպվում է արտոնյալ պայմաններով՝ համավճարային սկզբունքի կիրառմամբ**,

3) պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ստոմատոլոգիական վիրաբուժական բժշկական օգնությունը (ատամի հեռացումը),

4) մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության ամբողջ ծավալն իրականացվում է անվճար՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

18. Հաշմանդամություն ունեցող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հոսպիտալացումը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են բժշկական կազմակերպության տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում, իսկ պայմանագրային գումարի սպառման դեպքում՝ պլանային կարգով, հերթագրման եղանակով՝ համաձայն Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 4-ով սահմանված կարգի***, ընդ որում.

1) հերթագրումն իրականացվում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով,

2) Էլեկտրոնային հերթագրումը կատարվում է ըստ դիմելիության ժամկետների, ուղեգրի հիման վրա,

3) հերթագրվածներն իրենց բժշկական օգնության ժամկետի մասին տեղեկացվում են գրավոր, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով,

4) հերթագրվածների վերաբերյալ տեղեկատվությունը փակցվում է բժշկական կազմակերպության ընդունարանում՝ տեսանելի տեղում.

** առանց բժշկական ցուցումների և առանց համապատասխան ուղեգրման բժշկական խորհրդատվությունը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, ինչպես նաև տվյալ պոլիկլինիկայում գործող այն նեղ մասնագիտական ծառայությունները, որոնք չեն ընդգրկված պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալներում և որոնց համար տվյալ պետական պատվեր չի տեղադրվել կազմակերպվում են վճարովի հիմունքներով,*

*** արտոնյալ պայմաններով մատուցվող ստոմատոլոգիական ծառայությունների պետության մասնակցության մասը կազմում է ընդհանուր գնի 65 տոկոսը, իսկ շահառուի կողմից վճարվող համավճարի չափը՝ ընդհանուր գնի 35 տոկոսը.*

******* *հերթագրման կարգից դուրս՝ արտահերթ բժշկական օգնությունն իրականացվում է վճարովի հիմունքներով, տվյալ բժշկական կազմակերպությունում սահմանված կարգով և գներով:*